ՍԻՍԻԱՆԻ ԳՈՐԳԵՐԸ

Մ. Գ. ԵՐԶՆԿՅԱՆ

Կիրառական արվեստի ամենատարածված և զարգացած տեսակը Սիսիտնում եղել և մնում է գորգագործությունը։

Գյուղից գյուղ կրկնվում են գորգերի համարյա նույն տեսակները, զարդանախշերի օգտագործման շատ աննշան շեղումներով և մոտավորապես պահպանելով կոլորիտի նույն տարրերը, որի գունային գաման տատանվում է 7—12 գույների միջև։ Եվ այնքանով, որքանով գորգարվեստը անցել է բավական երկար պատմական զարգացման ուղի, այդ ընթացքում առանձնացել են գորգերի որոշակի տեսակներ, որոնք առավել սիրված են ժողովրդի կողմից։ Այս հոդվածում մենք կանգ կառնենք դրանցից մեկ-երկուսի վրա։

Խոշոր զարդանախշերը (մեդալիոններ) գորգի կենտրոնական դաշտում հիմնականում բնորոշում են նրա այս կամ այն տեսակը։ Մենք պահպանել ենք այդ սկզբունքը ամենահատկանշականները բնորոշելու համար։

Գյուղերում[1] հանդիպող գորգերից ամենատարածվածը «պոգնոցի նախշն»[2] է։ Այդ գորգերի կենտրոնական դաշտում գերիշխում են երեք տիպի երկրաչափական խոշոր զարդանախշեր՝ շեղանկյունի, վեցանկյունի և բազմանկյունու տեսքով, աստիճանաձև եզրանախշերով (կոպիտ գծանկարով խաչ հիշեցնող)։

Առաջին տեսակը բնորոշում է հստակ երկրաչափական գծայնությունը։ «Կենաց ծառի» մոտիվը խիստ ձգված է, և այդ նույն ձևով պահպանված են հիմնական մեդալիոնի մյուս մոտիվները՝ խաչ, աստղ, շեղանկյունի։ Խոշոր շեղանկյունաձև զարդանախշերը կենտրոնական դաշտում կրկնված են երկու անգամ։

«Պոգնոցի նախշի» հաջորդ տեսակը, պահպանելով նույն խիստ գծայնությունը, տարբերակում է գալարագծի մոտիվը, պահպանում է ուղղանկյունի կառուցվածքը, թույլ չտալով ոչ մի կլորություն, դրանով իսկ հասնելով ամբողջ պատկերի ոճական միասնությանը։

Այս գորգերի երկու տեսակներում պահպանված են մուգ կապույտ և մուգ կարմիր ֆոները, որոնց վրա շատ արտահայտիչ ձևով երևում են լուսավոր գծագրումներով խոշոր զարդանախշերի ուրվագծերը։

Երրորդ տեսակը հանդես է գալիս խոշոր մեդալիոնի շատ բնորոշ աստիճանաձև եզրազարդով, որը նույն մեդալիոնում կրկնվում է երկու անգամ։ Նույն զարդանախշի կրկնությունը ընդհանրապես շատ բնորոշ երևույթ է այդ տիպի գորգերի համար։

Եթե առաջին երկու տեսակներում մեդալիոնները մեծ են և գորգի հիմնական դաշտում կրկնվում են երկու անգամ, ապա երրորդ տեսակում՝ հինգ

---

1 Բնունիս, Ախլաթյան, Տոլորս, Բոնակոթ, Աշոտավան, Լեռնաշեն, Լոր և այլն։

2 Այստեղ և մյուս տեղերում պահպանված են ժողովրդական տերմինները։

անգամ։ Այդ հանգամանքը վկայում է «պողնոցի նախշով» գորգերի կոմպոզիցիոն տարբեր կառուցվածքի մասին, որը թելադրված է գորգերի չափսերով[3]։

Այստեղ ներկայացված գորգերի այդ երեք տեսակները, մեզ թվում է, կարելի է համախմբել մի տեսակի մեջ և անվանել «պողնոցի նախշով» գորգեր։ Երկրորդ տիպը, ի տարբերություն առաջինի, որը տարածված էր մեր տեսած բոլոր տասը գյուղերում, մեզ հանդիպեց միայն Բնունիսում, Բռնակոթում և Աշոտավանում (Աղքյանդ)։ Սրանք հայկական ղորդերը հետազոտող Վ. Թեմուրջյանը բնութագրել է որպես վիշապազորդ[4]։

Ութը վիշապների ոլորուն ֆիգուրները շրջապատում են հավերժական շարժիչի խորհրդանշանը, առնված քառակուսու մեջ, որի երկու կողմերում վիշապների միջև շրջափակված է կենաց ծառի մոտիվը։ Սա մի մեդալիոնի նկարագրությունն է։ Այդ տեսքով մեծ գարդանախշը կրկնվում է երեք անդամ։ Հաճախ կենտրոնական զարդանախշը լինում է մուգ շագանակագույն (բրդի բնական գույնը), մուգ կապույտ, մուգ կարմիր գույների, իսկ մնացած երկուսը՝ բաց կարմիր և հակառակը։ Բոլոր դեպքերում պահպանվում է գունային հավասարակշռությունը։ Վ. Թեմուրջյանի համոզմամբ այդպիսի ղորդերում պատկերված վիշապը հեթանոսական ծագում ունի։

Եթե առաջին տիպի գորգերի համար բնորոշ էր գծայնությունը, ապա վիշապագորդերում գծանկարը տեղ է տալիս պատկերի արտահայտման դեղանկարչական ձևին (նկ. № 1)։

Մեր ուսումնասիրությունների ընթացքում ուշադրավ էր մի հետաքրքիր հանդամանք. Տոլորս գյուղում և Սիսիան քաղաքում (շրջկենտրոն) հանդիպում են գորգեր, որոնք իրենց կենտրոնական դաշտի զարդանախշով հիշեցնում են նշանավոր «Գոհարի գորգը» 1680 թ. (գտնվում է Լոնդոնի Ալբերտի և Ելիզավետայի թանգարանում)։ Այդ ևս Վ. Թեմուրջյանը դիտում է որպես վիշապավոր, և իբոք, վիշապի մոտիվը այնտեղ առկա է բավական արտահայտիչ ձևով։

Այդ երկու գորգերի կապը՝ «Գոհարի գորգի» և մեզ հանդիպած գորգերի հետ, դժվար թե պատահական լինի։ Պետք է ենթադրել, որ մեր ուսումնասիրությունների ընթացքում, հետագայում, հնարավոր կլինի հանգել ավելի ճշգրիտ եզրակացությունների, չնայած ներկայումս էլ այդ գորգերի զարդանախշերի մոտիկությունը բացահայտ է։

Այսպիսով, Սիսիանի գորգերի երկրորդ տեսակը մեր կողմից առանձնացված է որպես վիշապավոր։

Հաջորդ տեսակը անվանում են «չթի նախշով» գորգեր, որոնք հաճախ հանդիպում են Բնունիսում,՝ Բռնակոթում և Սիսիան քաղաքում։ Սրանցում հիմնական շեշտը դրվում է մի ոչ մեծ նախշի վրա, որը կրկնվում է գորգի լայնքով և երկայնքով խիստ հետևողականորեն։ Նախշը շեղանկյունի է։ Կառուցման սկզբունքով, «չթի նախշին» հետևում է զորդի մի այլ տեսակ, որի նախշը նման է ծաղկասկահակի՝ շրջափակված մի քիչ անսովոր սրտակերպ դիմակ հիշեցնող ձևի մեջ։

---

3 Առաջիններում գերիշխում են 1.2,5 մ կամ 1,5.3 մ չափը, երրորդում՝ 1,5.5 մ։

4 Վ. Թեմուրջյան, Գորգագործությունը Հայաստանում, ԳԱ պատմության ինստիտուտ, Երևան, 1955։

Abb. 1

Այդ խմբի գորգերը, մեր կարծիքով, կարելի է առանձնացնել որպես երրորդ տեսակ և անվանել «չթի նախշով» գորգեր։

Գորգերում օգտագործված բազմաթիվ մոտիվներում երկրաչափական սկզբունքի գերիշխումը ակնառու կերպով վկայում է օրնամենտի ստեղծման առանձնահատկության մասին ընդհանրապես։

Եթե գորգերի այս կամ այն տեսակը բնորոշվում են խոշոր զարդանախշերով, ապա երկրորդական մոտիվները օգտագործվում են ամենուրեք, որտեղ նրանց կարիքը զգացվում է։ Եվ եթե խոշոր medալիոնները համապատասխանում են իրենց որոշակի տեսակին, ապա երկրորդական մոտիվները ավելի մասսայական են և անցնում են մի գորգից մյուսը, անկախ նրանց տեսակներից, և յուրաքանչյուրում ստանում են իրենց երանգավորումը, որը կախված է այն շեշտից, որ դրվում է նրա վրա։

Սիսիանի գորգերում շատ տարածված է թռչնային մոտիվը, որը ընդհանրապես անվանում են «դուշ», անկախ նրանից, թե ինչ թռչուն է պատկերված գորգի վրա։ Մասսայական են նաև աստղերի, խաչերի, փոքրիկ վարդերի, եղնիկների, մարդկային ֆիգուրաների արտացոլումը։ Բոլոր այդ մոտիվները մի դեպքում խիստ երկրաչափական են և գծային (աստղեր, խաչեր), մյուսները ոճավորված են, մոտենալով բնական նախատիպին (թռչունների, եղնիկների, մարդկային ֆիգուրաների)։

Գորգերում շատ տարածված է օձի նախշը, որը օգտագործում են բավական հաճախ և շատ։

Ընդհանուր տարածում գտած մոտիվների հետ համատեղ գորգերի վրա հաճախ ընդօրինակվում են կենցաղային իրեր. օրինակ՝ աղաման, սանր և այլն։ Այդ վկայում է Սիսիանի գորգերի շատ մոտիվների բացառիկ պարզունակության մասին։ Նրանց մեջ լայնորեն օգտագործվում են նաև գորգերի ստեղծման տարեթվերի և գորգագործի անվան, երբեմն էլ աղդանվան նշումները։ Դրանք ներդաշնակորեն ձուլվում են գորգի դեկորի ընդհանուր անսամբլի հետ (նկ. № 2)։

Գորգերի եզրազարդերում օգտագործվում է օրնամենտային մոտիվների որոշակի մի խումբ, որի մեջ մտնում են այսպես կոչված «քյարփինջի նախշը» (հայկական գորգերում հայտնի է որպես տերևի և ըմպանակի նախշ), «հավի նախշը», «ճաները», «թորակները» (ճյուղավոր շեղանկյուններ)։

Դրանց հետ միասին գորգերում լայնորեն օգտագործվում է օրնամենտը։ Անհրաժեշտ է նշել, որ սև և սպիտակ գույները լայն օգտագործում չեն գտել ոչ Սիսիանի հնագույն և ոչ էլ նոր գորգերում։ Գորգերի գունային գամման լուծվում է մեծ ճաշակով և գրանով հասնում է հաճելի երանգավորման։

Սիսիանում լայնորեն օգտագործում են բրդի բնական գույնը, որն ինքնըստինքյան դրական երևույթ է։

Չի կարելի չնշել գորգագործների՝ հիմնականը և երկրորդականը գունային համադրությամբ առանձնացնելու բացառիկ հմտությունը, որտեղ չօգտագործելով սև և սպիտակ գույները, միշտ գտնում են երանգավորման միջին լուծում։

Ներկայումս գորգագործները օգտագործում են քիմիական ներկանյութեր, սակայն ոչ միշտ են կարողանում ճիշտ վարվել նրանց հետ և դա բացասաբար է անդրադառնում գորգերի գունային լուծման վրա։

Եթե XIX դարի վերջին և XX դարի սկզբներին Սիսիանում գորգագործությունը ինտենսիվ զարգացում էր ապրում, ապա այդ չի նկատվում այժմ։ Անկասկած, դրանում արտահայտվում է ժամանակի ոգին։ Մեր օրերում տորքի (դազգահի) մոտ նստելու աննպատակահարմարությունը խիստ զգալի է։ Այն դեպքում, երբ միշտ կարելի է գտնել գործարանային արտադրանքի գործվածքներ, այդ գործի վրա ժամանակ վատնել չեն ցանկանում։

Նկ. 2

Բնատնտեսությունը դարձել է պատմության սեփականությունը և մեր դարաշրջանը առաջադրում է իր խնդիրները, որոնք վերաբերում են նաև կիրառական արվեստին։ Այն փաստը, որ գյուղում հիմնականում չեն գործում գորգեր, անժխտելի է, չնայած որոշ տեղերում, ինչպես Բունիսում և Բոնակոթում դեռևս որոշ մարդիկ շարունակում են զբաղվել գորգագործությամբ։

Հին հայկական գորգերի օրինակով «Հայ գորգ» ֆիրման և բազմաթիվ արտելներ արտադրում են ձեռքի աշխատանքի գորգեր, որոնք մեծ ընդունելություն են գտնում մեզանում, Միության մեջ և արտասահմանում։ Այդ ամենի մասին կարող են վկայել այն բազմաթիվ մեդալները, որոնց արժանացել են Հայաստանի շատ գորգեր։

Մեզ թվում է, որ ձեռքի աշխատանքի գորգագործության մեջ կարելի է ակտիվորեն ընդգրկել գյուղական գորգագործուհիների որոշ մասը։

Կարելի է նաև լայնորեն դնել բնական ներկանյութերի օգտագործման հարցը և բարձրորակ բրդի օգտագործումը, որով գյուղերում անկողիններ են պատրաստում։ Բայց այս ամենով հանդերձ, գորգագործության բնագավառում դեռևս գոյություն ունեն ցավալի փաստեր։ Այսպես, օրինակ, գորգերի վրա

վերարտադրվում են նախշեր, որոնք ընդօրինակվում են ասեղնագործությունից, մետաքսի և չթի տարբեր կտորների նախշերից։

Յուրաքանչյուր արվեստի առանձնահատկությունը առաջացնում է արտահայտչամիջոցների ինքնատիպություն։ Օրինակ, եթե գունավոր թելերով ասեղնագործության մեջ անհրաժեշտ են բոլոր գունային նրբերանգների անցումները, ապա գորգերը այդ չեն պահանջում ընդհանրապես, որովհետև իրենց առանձնահատկության ուժով գորգի կենտրոնական դաշտը կառուցվում է ինչպես ամբողջական դույնով, այնպես էլ ընդհանրացված դեկորատիվ կերպարով, որը միանգամայն ժխտում է նրա մասնատումը։

Բոնակոթ գյուղում գորգերի վրա շրջազգեստի համար գնված կտորից նախշեր են ընդօրինակված։ Այդպիսի գորգը ամենևին չի համապատասխանում այն դեղագիտական պահանջներին, որոնք դրվում են կիրառական արվեստի այդ տեսակի առջև։ Այդ պահանջներին չեն բավարարում նաև երկու ահագին եղջերուներ, որոնք օգտագործված են վիշապագորգի երկու մեդալիոններում (Բոնակոթ գյուղում)։

Նշված օրինակները բոլորովին չեն կապվում այդ արվեստի ազգային ավանդներին, բացահայտ կերպով իջեցնում են այն հնարավորությունների մակարդակը, որոնք կարելի է ներկայացնել գորգին, որպես դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործության։

КОВРЫ СИСИАНА

М. Г. ЕРЗНКЯН

Резюме

Изучая старинные сиснанские ковры, автор выделил три основных наиболее характерных вида. Первый, самый распространенный, известен под названием «узор подноса» с резко выраженным геометрическим характером. Второй—«драконовые ковры» и ковры—типа «Гоар» 1680 года, находящийся в «Музее Альберта и Елизаветы» в Лондоне. Третий вид—ковры с ситцевым узором. Наряду с этим распространены ковры с мелким орнаментом. В колорите ковров отсутствуют черный и белый цвета, широко используется натуральная коричневая шерсть.